ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
Մ Ա Ր Զ Պ Ե Տ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

Ֆաքս /374010/ 28 18 32

‘_____’_____2016թ. N_____

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2016թ մայիսի 17-ի 284/8 հարցման, ի կատարումն ՀՀ կառավարության 2015թ հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման՝ հայտնում ենք, որ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում առանձնացվել են տեղեկություն ստանալու հարցումները, դրանք գրանցվում են քաղաքացիների դիմումներից, բողոքներից և առաջարկություններից առանձին:

Համաձայն հարցման 2-րդ կետի ներկայացնում ենք ‘’ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարությաան կարգը’’,ինչը հաստատվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2013թ դեկտեմբերի 9-ի N 93-Ն որոշմամբ և գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարությունում:Մեր կողմից նշված կարգով է իրականացվում տեղեկությունների ստացման հարցումների գրանցումը/առդիր՝ 12 թերթ/:

Ինչ վերաբերվում է հարցումների դասակարգմանը և դրանց վիճակագրական վարմանը, ապա ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2016թ մայիսի 19-ի թիվ 50 կարգադրությամբ պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս.Մարգարյանը/ առդիր՝ 1 թերթ/:

Հարգանքով՝ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող՝ Հ. Կարապետյան
Հեռ /0281/ 2-25-57